ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԴՐՈՇԻ ՆԵՐՔՈ

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Հ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Մարդկության կյանքում նոր դարաշրջանի սկիզբն ավետած Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը հանդիսացավ XX դարի հայրենական ու համաշխարհային պատմության բեկումնային իրադարձությունը։

Վ. Ի. Լենինի կուսակցության ղեկավարությամբ իրականացված մեծագույն հեղափոխությունը նշանավորեց մարդկության շրջադարձը դեպի սոցիալիզմ, ավետեց առաջին բանվորագյուղացիական պետության ծնունդը, դրեց սկզբունքորեն նոր, սոցիալիստական հասարակարգի սկիզբը։ Մեծ Հոկտեմբերը նախանշեց համաշխարհային զարգացման գլխավոր ուղղություններն ու հիմնական միտումները, սկզբնավորեց կապիտալիզմը նոր՝ կոմունիստական հասարակական-քաղաքական ֆորմացիայով փոխարինվելու անդարձ պրոցեսը։ Ինչպես նշել է Վ. Ի. Լենինը՝ Ռուսաստանին բաժին ընկավ «սկսելու սովետական պետության կառուցումը, սկսելու դրանով համաշխարհային պատմության նոր դարաշրջան, այն նոր դասակարգի տիրապետության դարաշրջանը, որը ճնշված է բոլոր կապիտալիստական երկրներում և ամենուրեք գնում է դեպի նոր կյանք, դեպի հաղթանակ բուրժուազիայի դեմ, դեպի պրոլետարիատի դիկտատուրա, դեպի մարդկության ազատագրումը կապիտալի լծից, իմպերիալիստական պատերազմներից»[1]։

Կապիտալիստական և կալվածատիրական շահագործման լուծը թոթափած հաղթանակած ժողովրդի աստեղային ժամը՝ Հոկտեմբերը, բախտորոշ նշանակություն ունեցավ ոչ միայն Ռուսաստանի, այլև ամբողջ աշխարհի մարդկության համար։ Դա դրսևորվեց սովետական առաջին իսկ դեկրետում՝ 1917 թ. նոյեմբերի 2-ին Լենինի ստորագրությամբ հրապարակված «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիայում»։ Սովետական կառավարությունն իր ազգային քաղաքականության հիմնական սկզբունք հռչակեց Ռուսաստանի ժողովուրդների իրավահավասարությունը և սուվերենությունը, ազատ ինքնորոշման՝ ընդհուպ մինչև անջատման և ինքնուրույն պետության ստեղծման իրավունքը, ազգային-կրոնական ամեն կարգի արտոնությունների ու սահմանափակումների վերացումը, ազգային փոքրամասնությունների ու էթնիկական խմբերի ազատ զարգացումը։ Դրանով իսկ Մեծ Հոկտեմբերը՝ սովետական մարդկանց բարձրագույն ազգային հպարտության առարկան, դրեց մեր երկրում ազգային հարցի լուծման հիմքերը։

Հռչակելով Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ազատությունը և իրավահավասարությունը, նախանշված նպատակներին հասնելու համար սովետական կառավարությունը իրականացնում էր ժողովուրդների փոխօգնության, համատեղ գործողությունների կոմպլեքս միջոցառումներ։

Սոցիալիստական հեղափոխության հռչակած սկզբունքները, կուսակցության լենինյան ազգային քաղաքականությունը հուժկու հարված հասցրեցին բուրժուական ազգայնական գաղափարախոսությանը, հեշտացրին ճնշված ժողովուրդների պայքարը սեփական բուրժուազիայի դեմ, ամրապնդեցին բազ-

---

1 Վ. Ի. Լենին. Նույն, հ. 44, էջ 177։

մազգ Ռուսաստանի աշխատավորության ինտերնացիոնալ դաշինքը։ Այդ քաղաքականությունը հանդիսացավ պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարների հաղթանակը, Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին ազատագրեց ազգային և սոցիալական ճնշումից, նրանց տվեց պետական ինքնուրույնություն։ Ազգային-ազատագրական շարժումը թևակոխեց նոր էտապ։ Համայն Ռուսաստանում սկսվեց սովետական իշխանության հաղթարշավը։

Հոկտեմբերյան հեղափոխությամբ հուշակված պրոլետարիատի դիկտատուրան համաշխարհային պատմական նշանակություն ունեցող ակտ էր։ Հեղափոխության հաղթանակը մեծ ոգևորությամբ ընդունեցին բոլոր երկրների բանվորներն ու գյուղացիները, այն հզոր ներգործող ուժ հանդիսացավ համաշխարհային հեղափոխական պրոցեսի արագացման և խորացման համար։ Ռուսաստանի բանվոր դասակարգին, աշխատավորությանը հեղափոխական սխրանքի հանած բոլշևիկյան կուսակցության գլուխ կանգնած Վ. Ի. Լենինի տեսական միտքը, բարոյական օրինակը, տիտանական գործունեությունը առաջացնում էին բանվոր դասակարգի, աշխարհի առաջադեմ մարդկության հիացմունքը և հրճվանքը։ Ի դեմս Սովետական Ռուսաստանի, միջազգային պրոլետարիատը իմպերիալիզմի դեմ իր պայքարում ձեռք բերեց հզոր նեցուկ։ Աշխարհում առաջին Սովետների հանրապետությունը կանգնած էր «որպես միջազգային սոցիալիզմի ջահ և որպես օրինակ բոլոր աշխատավոր մասսաների առջև»[2]։

Համաշխարհային հեղափոխության ընթացքը, մարդկության ամբողջ պատմական զարգացումը, աշխատավոր դանգվածների քաղաքական ակտիվությունը, բանվորական և ազգային-ազատագրական շարժումները ցույց տվեցին, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը սոսկ ռուսական երևույթ չէ, այլ համաշխարհային նշանակություն ունեցող շրջադարձային իրադարձություն։ Հեղափոխության հաղթանակի առաջին օրից առաջավոր մարդկությունն ընկալեց նրա դեմոկրատական ու ժողովրդական բնույթը։ Խաղաղության մասին Լենինյան դեկրետում, Սովետական Ռուսաստանի կառավարության խաղաղասիրական առաջարկություններում, բոլոր ժողովուրդներին ազատ ինքնորոշման իրավունք վերապահելու, մարդու կողմից մարդու շահագործումը վերացնելու մեջ աշխարհի ժողովուրդները տեսնում էին պատերազմի ավարտի և խաղաղության իրական հեռանկար։

Սմոլնիում, Լենինի անունով ստացվում էին նամակներ Անգլիայից, Բելգիայից, Բուլղարիայից, Գերմանիայից, Հոլանդիայից, Իտալիայից, Կոլումբիայից, Չինաստանից, Շվեյցարիայից, Չեխոսլովակիայից, Ֆրանսիայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Ճապոնիայից և այլ երկրներից։ Արտասահմանյան երկրների աշխատավորները, ողջունելով Հոկտեմբերը, ընդգծում էին Ռուսաստանի օրինակին հետևելու, նրա հետ ձեռք ձեռքի առաջ ընթանալու իրենց պատրաստակամությունը։

Անօրինակ արիությամբ, չվախենալով զոհերից, չխնայելով իրենց, հենվելով գյուղացիության վրա ռուս բանվորները պայքար էին մղում հենց նոր նվաճած պետական իշխանության պահպանման ու ամրապնդման, ժողովուրդների սպանդին վերջ տալու և սոցիալիզմի իրագործմանը անցնելու համար։ Մենք պետք է օգնենք նրանց՝ այսպիսին էին առաջավոր մարդկանց մտորումները Հոկտեմբերյան հեղափոխության մասին։

Գերմանական պրոլետարիատի «Սպարտակ» կազմակերպությունը Պետրոգրադում հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո կոչ էր անում հետևել ռուսական պրոլետարիատի օրինակին, քանի որ միայն այդ դեպքում «միջազգային սոցիալիզմի «պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» մարտական կոչը արագորեն կվերածվի կենդանի ճշմարտության և իրականության»։ «Ռուսաստանի սովետական հանրապետությունը դարձել է պայքարի դրոշ, ինտերնացիոնալի դրոշ։ Այն քաջալերում է ուրիշներին, լիցքավորում է տատանողականներին արիությամբ, տասնապատկում մարտիկների խիզախությունն

---

[2] Նույն տեղում, հ. 35, էջ 330։

ու վճռականությունը»,—այսպես է բնութագրել համաշխարհային պրոլետարիատի համար Սովետների երկրի գոյությունը Կարլ Լիբկնեխտը։

1918 թ. նոյեմբերին ոտքի ելան գերմանական բանվորները։ Նրանք կարմիր դրոշ բարձրացրին Քիլում, Համբուրգում, Լյուբեկում, Բրեմենում, Հաննովերում, Բրաունշվեյգում, Մյունխենում, Շտուտգարտում, Մագդեբուրգում և այլ քաղաքներում։

Լենինի ուսմունքը, Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում, բոլշևիկյան կուսակցության հաղթական պայքարի օրինակը վճռական դեր խաղացին Իտալիայի սոցիալիստ-ինտերնացիոնալիստների գաղափարախոսության և քաղաքական հայացքների ձևավորման գործում։ Հոկտեմբերյան հեղափոխությունը իբրև միջազգային պրոլետարիատի հեղափոխություն ընդունեցին Անտոնիո Գրամշին, Պալմիրո Տոլյատտին, Ումբերտո Տերրաչինին և իտալացի շատ սոցիալիստներ։ 1917 թ. նոյեմբերի 24-ին Գրամշին «Ավանտի» թերթում հանդես եկավ «Հեղափոխություն կապիտալի դեմ» հոդվածով։ Ողջունելով Հոկտեմբերյան հեղափոխությունը, նա մատնանշում էր, որ հանուն սոցիալիստական հեղափոխության պայքարող աշխատավորությունը պետք է ընթանա բոլշևիկների ցույց տված ուղիով, օգտվի «թանկարժեք ռուսական փորձից»։ Նա լենինյան հեղափոխությունը ընկալում էր իբրև «Պրոմեթևսի սխրանք»։ «Ռուս կոմունիստները,—գրում էր Գրամշին,—կազմում են առաջնակարգ դեկավար միջուկ։ Լենինը, նրա հետ երբևէ առնչված մարդկանց վկայությամբ, իրեն դրսևորեց իբրև ժամանակակից Եվրոպայի մեծագույն պետական գործիչ, մարդ, որը օգտվում է զանգվածների մեջ անսահման ազդեցությունից, ժողովուրդների մեջ վառում է հոգի, նրանց մեջ առաջ է բերում գիտակցված կարգապահության զգացում, անձնավորություն, որը շնորհիվ իր հզոր մտքի, ընդունակ է իր հետևից տանելու համաշխարհային սոցիալական ուժերը»։

Իտալիայի հեղափոխական պրոլետարիատը կազմակերպեց մի շարք ցույցեր միլիտարիզմի և Սովետական Ռուսաստանի վրա հարձակման փորձերի դեմ. «Իտալական ժողովրդական շարժման հիմնական քաղաքական գիծը այն սերն էր, որ տածում էին զանգվածները Սովետական Ռուսաստանի նկատմամբ,—նշում էր Մոնտանյանին։—Երևի ոչ-ոք, բացառությամբ Գարիբալդիի, երբեք Իտալիայում չէր ունեցել այսպիսի համբավ, ինչպես Լենինը. նրան նվիրված երգերը երգում էին անգամ ամենախուլ գյուղակների աշխատավորները։ Ամենուր, ամենախուլ անկյունում կարելի էր պատերի վրա տեսնել նկարված մուրճ ու մանգաղ «Կեցցե՛ Ռուսաստանը», «Կեցցե՛ Լենինը» մակագրություններով»։

Ռուսական պրոլետարիատին որպես իր ազատագրության նախակարապետ տեսավ նաև լեհական պրոլետարիատը։ 1917 թ. նոյեմբերի 14-ին «Նապշուդ» թերթը գրում էր. «Մենք, իբրև լեհեր և իբրև սոցիալիստներ, ի սրտե և համակրանքով կանգնած ենք Լենինի կողմում։ Լենինը մի մարդ է, որ հարգանք է ներշնչում ամբողջ աշխարհին, փրկում է սոցիալիզմի դրոշի պատիվը, հարություն տալիս զանգվածների մեջ ազատ ժողովուրդների միջազգային եղբայրության գաղափարին, ...Այսօրվա ռուսական բոլոր կուսակցությունների մեջ միայն Լենինի կուսակցությունը, բոլշևիկների կուսակցությունը անպայմանորեն և անկեղծորեն, առանց որևէ վերապահության և ինտրիգների, կանգնած է Լեհաստանի անկախության դիրքերում»։

Լենինյան գաղափարների ազդեցությամբ էր ընթանում Հունգարիայի պրոլետարիատի համախմբման պրոցեսը։ Հոկտեմբերյան հեղափոխությանը, նրա առաջնորդ Լենինին խանդավառությամբ ողջունեց հունգարական բանվորական շարժման հեղափոխական թևի ներկայացուցիչ Դյուլա Ալպարին։ 1917 թ. նոյեմբերին Ալպարին գրում էր, որ «փետրվարյան բուրժուազեմոկրատական հեղափոխությունից հետո առաջին պլանի վրա հայտնվեց Լենինի անունը», որ Լենինն ու նրա կուսակցությունը «ուզում են վերջ տալ բանվորների ու գյուղացիների շահագործմանը, պահանջում են անհապաղ բաժանել խոշոր կալվածքները և իրականացնել հեռու գնացող սոցիալ-քաղաքական վերափոխումներ»։

պահանջում են ֆաբրիկաների ու գործարանների բռնագրավում»։ Ալպարին բացատրում էր, որ իշխանության գլուխ անցած Լենինի կուսակցության ծրագիրը կունենա «անհաղթահարելի ձգողական ուժ գյուղացիության, զինվորների, օժանդակ աշխատանքով զբաղված անձանց և առաջին հերթին բանվորների համար, այսինքն՝ նրանց համար, ովքեր աշխատում և ձեռքում են պահում զենքը»։

Հունգարական բանվորական շարժման ականավոր գործիչ Բելա Կունը գրում էր, որ դժվար է պատկերացնել մի այլ դպրոց, որը դաստիարակեր այնպես արագ և լավ, ինչպես Հոկտեմբերյան հեղափոխությունը։ 1918 թ. հունիսին գրած «Լենին» հոդվածում, որը հրատարակվեց որպես Վ. Ի. Լենինի «Պայքարի ճանապարհը» գրքի առաջաբան, Կունը բացահայտեց հեղափոխության առաջնորդի կերպարը, լենինյան ուսմունքի նշանակությունը «հեղափոխության շեմին կանգնած» հունգարական պրոլետարիատի համար։ «Լենինը միջազգային պրոլետարական հեղափոխության առաջին հերոսը և առաջնորդն է, բանվոր դասակարգի շահերի պաշտպանը՝ առանց լեզվի և ռասայի տարբերության,—գրում էր Կունը։—Լենինը մեր ժամանակաշրջանի ամենաականավոր հեղափոխականն է և տեսաբանը, Մարքսի ուսմունքի ժառանգորդը և շարունակողը, մարքսիզմի միջազգային, հեղափոխական կրակի պահապանը»։

Լենինի ուսմունքին, Ռուսաստանի օրինակին հետևելը հանգեցրեց պրոլետարիատի մասսայական շարժումներին, հեղափոխական ելույթներին։ Ավստրոհունգարիայում մայրաքաղաքի բանվորների հուժկու գործադուլը 1918 թ. հունվարին հանգեցրեց այնտեղ առաջին բանվորական սովետների ստեղծմանը։ 1918 թ. մարտին աշխատավորության հզոր ցույց տեղի ունեցավ Բուդապեշտում։ Սովետների համար ակտիվ պայքար ծավալվեց Դանիայում, Նորվեգիայում, Շվեդիայում։ Հեղափոխություն բռնկվեց Ֆինլանդիայում, լենինյան գաղափարների ներքո համախմբվում էին Ֆրանսիայի առաջադեմ ուժերը։

Սովետական Ռուսաստանի օրինակը մեծ արձագանք գտավ Ասիայի, Ամերիկայի, Մերձավոր Արևելքի երկրներում։ Հոկտեմբերի ազդեցությունը հարավից տարածվեց հյուսիս, արևմուտքից արևելք, Ատլանտիկայից Խաղաղ օվկիանոս։ Շատ մարդկանց մոտ պրոլետարական հեղափոխությունն առաջ բերեց խոր համակրանք և ինտերնացիոնալ համերաշխություն։ Լուիս Կարլոս Պրեստեսը նշում էր. «Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության առաջին իսկ օրերից բրազիլական բանվոր դասակարգը ըմբռնեց բոլշևիկյան կուսակցության և նրա հանճարեղ առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինի գլխավորությամբ ռուսական պրոլետարիատի հաղթանակի խոր իմաստը։ Նա հասկացավ, որ նոր դարաշրջան է բացվել մարդկության պատմության մեջ»։

«Ձեր պայքարն իր իսկ էությամբ՝ մեր պայքարն է, ձեր հաղթանակը՝ մեր հաղթանակը»,—գրում էին ամերիկացի բանվորները Լենինին։

«Հեղափոխական Ռուսաստանը իսկական դեմոկրատիայի ամենահզոր հենարանն է, այն հանդիսանում է ամբողջ աշխարհում կապիտալիստական կարգի տապալման անխախտ հիմքը»։ Այս խոսքերը, որ գրվել են 1917 թ. դեկտեմբերի 5-ին, պատկանում են Չիլիի կոմունիստական կուսակցության հիմնադիր Լուիս Էմիլիո Ռեկաբարենին։ Բոլշևիկների դիրքորոշումը հետևողականորեն պաշտպանում էր Արգենտինայի սոցիալիստական կուսակցության մարքս-լենինյան թևը՝ Վիկտորիո Կոդովիլայի և Ռոդոլֆո Հիրոլդիի գլխավորությամբ։ Արգենտինայի սոցիալիստական կուսակցության առաջին համագումարը (1918 թ. հունվարի 5—6) իր մանիֆեստում նշեց. «Երկրի վրա փչեց ազատության տաք, սուր քամի։ Այն սկիզբ առավ Ռուսաստանում և տարածվեց աշխարհի բոլոր կողմերը։ Նրա շարժիչ ուժը սոցիալիզմի հաստատումն է։ Այստեղ, Ամերիկայի այս մասում, մենք ուզում ենք լինել խորը հեղափոխական վերափոխումների գործոն և ակտիվ մասնակիցներ», պայքարել «երկրում ամենաարդարացի հասարակության՝ առանց շահագործվողների և շահագործողների, առանց պատերազմների և առանց բռնակալների հասարակության հաստատման համար, ավանդ ներդնել պրոլետարիատի ազատագրության մեջ, որը ազատագրում և համերաշխություն կբերի ողջ մարդկությանը»։

Ռուս պրոլետարիատի արիությունը և պայքարի վճռականությունը ոգեշընչեցին Հարավային Աֆրիկայի բանվորներին։ Սովետական կառավարության, բոլշևիկյան կուսակցության ղեկավարների հայտարարությունները ջերմ արձագանք էին գտնում ժողովրդական զանգվածների շրջանում։ Ինչպես գրում էին Հոկտեմբերի ժամանակակիցները, «ռուսական կոմունիստական կուսակցությունը, շարադրելով մարքսիզմի տեսությունը, առաջադրում էր պարզ, ակրնհայտ-անհերքելի թեզիսներ, բոլոր երկրների պրոլետարների համար պիտանի հեղափոխական գործունեության ծրագիր, բանվորների և գյուղացիների մեջ արթնացնում սեփական ուժի, դասակարգային շահերի գիտակցություն»։

Հոկտեմբերի գաղափարը մուտք գործեց և Չինաստան։ Սովետական իշխանության առաջին դեկրետները, ՌՍՖՍՀ առաջին սահմանադրությունը ուսումնասիրվում էին հեղափոխական պրոլետարիատի կողմից։ Առաջադիմական թերթերում տպագրված հոդվածներից նա իմանում էր ճշմարտությունը Լենինի, Հոկտեմբերյան հեղափոխության, Սովետական Ռուսաստանի մասին։ Մեծ Հոկտեմբերի փորձի ուսումնասիրությունը դիտվում էր որպես առաջնակարգ նշանակություն ունեցող հարց։ Պեկինի և Տյանցզյանի համալսարաններում ուսանողության շրջանում լենինյան գաղափարները պրոպագանդում էր պրոֆեսոր Լի Դաշաոն՝ Չինաստանի կոմունիստական կուսակցության կազմակերպիչներից մեկը։ Նա ողջունեց Հոկտեմբերյան հեղափոխությունը որպես «Նոր համաշխարհային քաղաքակրթության լույս», կոչ արեց երկրի պրոլետարիատին ուսումնասիրել ռուսական փորձը, «հետևել ռուսական օրինակին», քանի որ «այդ հեղափոխությունը սոցիալիստական է, խոր սոցիալական, որը պետք է հաղթանակի ամբողջ աշխարհում» և առանց «Ռուսաստանի չի կարելի ստեղծել նոր համաշխարհային քաղաքակրթություն»։ Արդեն 1918 թ. մայիսի 7-ին չինական առաջադեմ ուսանողությունը հանդես եկավ Չինաստանի կառավարության և Ճապոնիայի այսպես կոչված «Համատեղ պաշտպանական գործողությունների մասին» հակասովետական համաձայնագրի դեմ։ Վերսալից հիասթափված չինական պրոլետարիատը վճռական շրջադարձ կատարեց դեպի Սովետական Ռուսաստանը։

Ստեղծված ճգնաժամից դուրս գալու միակ ելքը չինական պրոլետարիատը տեսնում էր Լենինի գաղափարների, ՌՍՖՍՀ-ի անշահախնդիր օգնության, սովետական կառավարության 1919 թ. հունիսի 25-ին չին ժողովրդին ուղղված կոչի սկզբունքների իրականացման մեջ։ Ամենուր ընդունվում էին Սովետական Ռուսաստանի կառավարության քաղաքականությունը պաշտպանող բանաձևեր։ Ավելի քան 30 հասարակական կազմակերպություններ իրենց բանաձևերն ուղարկեցին Մոսկվա։ «Բանվորագյուղացիական կառավարության այդ ազնվագույն ակտը հիրավի հանդիսանում է հսկայական ներդրում ամբողջ աշխարհում խաղաղության գործում»,—գրում էին իրենց հեռագրում Պեկինի համալսարանի ուսանողները։ Նրանք պահանջում էին, որպեսզի Չինաստանի կառավարությունը հաշվի առնի ժողովրդի կամքը և դիվանագիտական հարաբերություններ հաստատի սովետական կառավարության հետ։

Սովետական կառավարությանը գրած նամակում ուսանողների համաչինական միությունը գրում էր. «Ձեր աննախադեպ սխրանքը հեղափոխության մեջ բացում է նոր դարագլուխ։ Մենք հրճվում ենք Ձեզանով և շնորհակալություն ենք հայտնում Ձեզ։ Մենք կանենք մեզանից կախված ամեն ինչ, որպեսզի երկրում առաջ բերենք ջերմ համակրանք Նոր Ռուսաստանի նկատմամբ»։

Հոկտեմբերի գաղափարների հաղթարշավը Լենինին հիմք տվեց հայտարարելու. «Ամբողջ աշխարհի բանվոր դասակարգն զգում է, որ ռուսական հեղափոխությունը իր սեփական գործն է։ Իմպերիալիստական մի խմբի կողմից մյուսի դեմ մղվող պատերազմին զուգընթաց ամենուրեք սկսվում է պատերազմը, որը ռուսական հեղափոխության օրինակով վարակված բանվոր դասակարգը հայտարարում է իր սեփական բուրժուազիային»[3]։ Եվ ապա. «Ռուս

[3] Նույն տեղում, հ. 31, էջ 89—90։

բանվորների պայքարն արդեն արել է այն, որ բոլոր երկրների բանվորական մասսաները գիտեն, որ այստեղ, Ռուսաստանում լուծվում է ընդհանուր համաշխարհային հեղափոխության բախտը»[4], նրանք ընթանում են «անշեղորեն դեպի կոմունիստական, բոլշևիկյան տակտիկան»[5]։

Լենինի դրոշի ներքո համախմբվում էին աշխարհի առաջավոր մարդիկ։ Հոկտեմբերի բարիկադների վրա, աշխարհում առաջին սոցիալիստական հայրենիքը պաշտպանելով մարտնչում էին տասնյակ հազարավոր բուլղարներ, հունգարներ, լեհեր, չեխեր, ավստրիացիներ, գերմանացիներ, սլովակներ, ռումիններ, հարավսլավացիներ, չինացիներ, կորեացիներ և բազմաթիվ այլ ազգությունների ներկայացուցիչներ։ Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով Ռուսաստանում հայտնված ռազմագերիներից մոտ 200 հազար ինտերնացիոնալիստներ զինվորագրվեցին ավելի քան 140 զորամասերում և ստորաբաժանումներում։ Ռազմագերիների ինտերնացիոնալիստական շարժումը ղեկավարում էր 1918 թ. ապրիլին ստեղծված ՌՍԴ(բ)Կ Կենտկոմին առընթեր գործող արտասահմանյան խմբերի կենտրոնական ֆեդերացիան Բելա Կունի գլխավորությամբ։ Ֆեդերացիան միավորում էր հունգարական, ռումինական, հարավսլավական, չեխոսլովակյան, գերմանական սեկցիաները, ֆիննական, բուլղարական, անգլո-ամերիկյան խմբերը։ Ֆեդերացիան կազմակերպում էր կարմիր բանակի ինտերնացիոնալ զորամասեր, նպաստում Արևմտյան Եվրոպայի երկրներում, մասնավորապես Հունգարիայում, Ավստրիայում, Գերմանիայում հեղափոխական շարժման զարգացմանը, մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածմանը, կոմունիստական կուսակցությունների ստեղծմանը։ Այդ խմբակների և ֆեդերացիայի աշխատանքը Լենինը կուսակցության VIII համագումարում բնորոշեց որպես Ռուսաստանի կոմունիստական կուսակցության գործունեության ամենակարևոր էջերից մեկը։

Լենինի, Հոկտեմբերի գաղափարները Եվրոպայի երկրների աշխատավորության շրջանում տարածում էին տուն վերադարձած ռազմագերիները։ Միայն Հունգարիա 1918 թ. Ռուսաստանից վերադարձավ 300 հազար զինվոր։ Ստեղծվեցին Հունգարական Սովետական Հանրապետությունը (1919 թ. մարտ-օգոստոս), Սլովակյան Սովետական Հանրապետությունը (1919 թ. հունիս-հուլիս), Բավարիայի Սովետական Հանրապետությունը (1919 թ. ապրիլ-մայիս)։

Ամենուր հեղափոխական շարժման գլուխ կանգնած էին կոմունիստները։ 1918 թ. կոմունիստական կուսակցություն ստեղծվեց Ֆինլանդիայում (օգոստոսի 29), Ավստրիայում (նոյեմբերի 3), Հունաստանում (նոյեմբերի 17), Նիդերլանդներում (նոյեմբերի 19), Հունգարիայում (նոյեմբերի 20)։ Լեհաստանի ու Լիտվայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ԼՍԿ-ի ձախ թևի միավորման շնորհիվ 1918 թ. դեկտեմբերի 16-ին ստեղծվեց Լեհաստանի կոմունիստական բանվորական կուսակցությունը։ «Սպարտակ միության» և Բրեմենի, Համբուրգի, Դրեզդենի այլ ձախերի շնորհիվ սահմանադիր համագումարում (1918 թ. դեկտեմբերի 30—1919 թ. հունվարի 1) ստեղծվեց Արևմտյան Եվրոպայի ամենամեծ Գերմանիայի կոմունիստական կուսակցությունը։

1918—1919 թթ. կոմունիստական խմբեր ու խմբակներ կազմավորվեցին Չեխոսլովակիայում, Ռումինիայում, Իտալիայում, Իսպանիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Մեծ Բրիտանիայում, Դանիայում, Շվեյցարիայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Բրազիլիայում, Չինաստանում, Կորեայում, Ավստրալիայում, Հարավ-Աֆրիկյան Միությունում և այլ երկրներում։ Հեղափոխական-ինտերնացիոնալիստական դիրքերի վրա էին կանգնած Բուլղարիայի բանվորական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը (նեղ սոցիալիստներ), Շվեդիայի ձախ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, սերբերի, խորվաթների և սլովենների թագավորության սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, նորվեգական բանվորական կուսակցությունը, Մեքսիկայի սոցիալիստական բանվորական կուսակցությունը։

4 Նույն տեղում, էջ 637։

5 Նույն տեղում, էջ 76։

Միջազգային կոմունիստական և բանվորական շարժման զարգացման գործում մեծ նշանակություն ունեցան Լենինի կապերը արտասահմանի հեղափոխական-ինտերնացիոնալիստների, բանվորական շարժման ձախ ուժերի ղեկավարների հետ, նրա հանդիպումները Բ. Կունի և Տ. Սամուելիի (Հունգարիա), Է. Ռախիայի, Օ. Կուուսինենի, Կ. Մաննների և Ի. Սիրոլայի (Ֆինլանդիա), Ժ. Սագուլի (Ֆրանսիա), Ռ. Մայնորի և Ա. Վիլյամսի (ԱՄՆ), Յա. Էկկերտի, Ս. Ֆուկսի և Գ. Գորդոնի (Գերմանիա), հնդիկ և չինացի բանվորների ներկայացուցիչների հետ, Լենինի «Պրոլետարական հեղափոխությունը և renեգատ Կաուտսկին», «Երկրորդ ինտերնացիոնալի կրախը», «Պետություն և հեղափոխություն» և այլ աշխատություններ։

Երիտասարդ կոմունիստական կուսակցությունները, զինվելով մարքսիզմ-լենինիզմի սկզբունքներով, հանդես էին գալիս իբրև պրոլետարական ինտերնացիոնալիզմի ջատագովներ, խնդիր էին դնում հեղափոխական ճանապարհով կապիտալիզմը տապալելու շնորհիվ նվաճել պրոլետարիատի դիկտատուրա, հայտնում էին իրենց համերաշխությունը ռուսական հեղափոխության հետ։

Լենինի պայքարը միջազգային կոմունիստական և բանվորական շարժման համախմբման ուղղությամբ ավարտվեց սահմանադիր համագումարում (1919 թ. մարտի 2—6, Մոսկվա) երրորդ, Կոմունիստական ինտերնացիոնալի ստեղծմամբ։ Լենինի կողմից մշակված կոնգրեսի փաստաթղթերը՝ «Կոմունիստական ինտերնացիոնալի մանիֆեստը ամբողջ աշխարհի պրոլետարներին», «Բոլոր երկրների բանվորներին» և կոնգրեսի բանաձևը դարձան միջազգային պրոլետարիատի իշխանության համար պայքարի մարտական ծրագիր, հստակորեն սահմանեցին կոմունիստական կուսակցությունների տակտիկայի հիմնական ուղղությունները, Կոմինտերնի հիմնական գաղափարական, ծրագրային և տակտիկական սկզբունքները։ Լենինի «Երրորդ ինտերնացիոնալը և նրա տեղը պատմության մեջ», «Բեռնի ինտերնացիոնալի հերոսները», «Երրորդ ինտերնացիոնալի խնդիրների մասին (Ռամսեյ Մակդոնալդը Երրորդ ինտերնացիոնալի մասին)», «Ինչպես է բուրժուազիան օգտագործում renեգատներին», «Երրորդ Կոմունիստական ինտերնացիոնալը» հոդվածները, որոնք հրատարակվեցին «Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագրում, պարզում էին ճշմարտությունը Կոմունիստական ինտերնացիոնալի և նրա թշնամիների մասին։

Ընդգծելով Կոմինտերնի ստեղծման պատմական նշանակությունը, Լենինը գրում էր. «Մոսկվայում 1919 թվականի մարտի 2-ին երրորդ, Կոմունիստական ինտերնացիոնալի հիմնադրումը այն բանի գրանցումն էր, ինչ նվաճել էին ոչ միայն ռուսական, ոչ միայն ռուսաստանյան, այլև գերմանական, ավստրիական, հունգարական, ֆինլանդական, շվեյցարական, մի խոսքով՝ միջազգային պրոլետարական մասսաները»[6]։

Կոմինտերնի գաղափարները թափանցում էին երկրագնդի բոլոր անկյունները, դառնում երիտասարդ կոմկուսների հեղափոխական մարտիկների սեփականությունը։ Տարբեր կուսակցությունների քաղաքական ծրագրերի առատության պայմաններում, կատաղի պայքարի ընթացքում, նրանք պաշտպանում էին Կոմինտերնի գիծը։ Մյուս կողմից՝ Ավստրիայի, Գերմանիայի, Դանիայի, Իտալիայի, Շվեդիայի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի և մյուս երկրների կոմունիստական շարժման մեջ առաջացավ «ձախ» դոկտրինյոր, առանձին գործիչների կողմից մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի հիմունքների դոգմատիկ բացատրման վտանգ, նկատվում էին ուլտրա-հեղափոխական ճոռոմաբանության, էքստրեմիստական տրամադրություններ, աղանդավորական տակտիկա։ Նկատի ունենալով այդ սխալների վնասակարությունը, Լենինը գրում էր. «Երրորդ Կոմունիստական ինտերնացիոնալի ծնվելուց դեռ մի տարի էլ չի անցել, բայց նա արդեն դառնում է մոդա և հրապուրանքի առարկա այն պոլիտիկանների համար, որոնք գնում են այնտեղ, ուր գնում է մասսան»[7]։

6 Նույն տեղում, էջ 633։

7 Նույն տեղում, հ. 41, էջ 33։

Նոր ծնված կոմունիստական կուսակցություններում գոկտրինյորության, դոգմատիզմի, աղանդավորության, ռեֆորմիզմի, էքստրեմիզմի էության դրսևորումները Լենինը ամբողջ խորությամբ բացահայտեց «Ձախության մանկական հիվանդությունը կոմունիզմում» աշխատության մեջ, որը լույս տեսավ 1920 թ. հունիսին ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, իտալերեն լեզուներով՝ Կոմունիստական ինտերնացիոնալի II կոնգրեսի նախօրյակին։

Լենինը մշակեց իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխության դարաշրջանում բանվոր դասակարգի պայքարի ղեկավարման մասին ամբողջական ուսմունք, ընդհանրացրեց երիտասարդ կոմունիստական կուսակցությունների փորձը, տվեց նրանց քաղաքական, գաղափարական, կազմակերպական ղեկավարման կոնկրետ հարցերի պատասխանը։ Լենինը օգնեց նրանց ճիշտ ըմբռնել հեղափոխական շարժման մեջ ընդհանուրը, պարտադիրը, միջազգայինը և ազգային առանձնահատուկը, նրանց զինեց հեղափոխական պայքարի ստրատեգիայի և տակտիկայի ուսմունքով։ Ամբողջ աշխարհի կոմունիստներին Լենինը դաստիարակում էր բոլշևիզմի, ռուսաստանյան հեղափոխությունների, հատկապես Հոկտեմբերի փորձով, որի «բոլոր հիմնական և բազում գծերը միջազգային նշանակություն ունեն բոլոր երկրների վրա նրա ունեցած ազդեցության իմաստով»[8]։ Ռուս բոլշևիկների, Հոկտեմբերյան հեղափոխության, պրոլետարիատի դիկտատուրայի երկրի փորձը օգնեց արևմտաեվրոպական և ամերիկյան պրոլետարական ինտերնացիոնալիստներին ակտիվորեն և ստեղծագործաբար որոնել իրենց երկրներում սոցիալիստական հեղափոխության ճիշտ ուղիները, հետևողականորեն պայքարել օպորտունիստների դեմ, վերջնականապես անջատվել նրանցից, կառուցել մարքս-լենինյան կուսակցություններ։ Աշխարհի տարբեր մայրցամաքներում աշխատավորությունը ոտքի կանգնեց սովետական իշխանության խաղաղ երթը ընդհատած Գերմանիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Ճապոնիայի իմպերիալիստների խաչակրաց արշավանքների, ներքին հակահեղափոխության սանձազերծած քաղաքացիական պատերազմին, Անգլիայի պարագլուխներ Չերչիլի, Լլոյդ Ջորջի, Քերզոնի, Ֆրանսիայի վարչապետ Կլեմանսոյի, ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնի և այլ բուրժուական գործիչների հակասովետական իմպերիալիստական ինտերվենցիայի դեմ։ Լայն թափ ստացավ «Ձեռքերդ հեռու Ռուսաստանից» համերաշխության հզոր շարժումը։ Այն ղեկավարում էին Թոմաս Մանը, Հարրի Պոլիտը և Ուիլյամ Գալախերը՝ Անգլիայում, Ջոն Ռիդը, Ու. Ֆոստերը, Զ. Ռոտենբերգը՝ ԱՄՆ-ում, Մարսել Կաշենը, Անատոլ Ֆրանսը, Հանրի Բարբյուսը, Պոլ Վայան Կուտյուրիեն՝ Ֆրանսիայում, Էռնստ Թելմանը՝ Գերմանիայում և ուրիշներ։ ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում բանվորները և նավահանգստային բեռնակիրները հրաժարվում էին բեռնել Սովետական Ռուսաստանի թշնամիներին ուղարկվող զինամթերքն ու պարենը, պահանջում էին Ռուսաստանից հետ կանչել ինտերվենցիոնիստական զորքերը։ ԱՄՆ-ի կոմկուսի կենտկոմը և բանվորական կոմունիստական կուսակցության կենտկոմը հանդես եկան «Ձախողենք Ռուսաստանի շրջափակումը» դիմումով։ Հաբավսլավիայի վրայով Ռուսաստանի դեմ զենքի փոխադրումը հարավսլավացի կոմունիստները դիտում էին որպես հարձակում իրենց երկրի վրա, Հունաստանի կոմունիստները հրատարակեցին կոչ՝ «Փրկել ռուսական հեղափոխությունը իմպերիալիստական հարձակումից»։ Այդպիսին էր և ֆրանսիական պրոլետարիատի կարծիքը։ Երիտասարդ կոմունիստները գտնում էին, որ ոչ մի սու, ոչ մի զինվոր չպետք է տալ Ռուսաստանի դեմ ավազակային հարձակմանը։ Ամենուր ընդունված բանաձևերում բանվոր դասակարգը կառավարություններից պահանջում էր վերջ տալ Ռուսաստանի Սովետական Հանրապետության դեմ ուղղված պատերազմին, դատապարտում «բանվորական սովետական Ռուսաստանը տապալելու փորձերը»։

---

8 Նույն տեղում։

Համաշխարհային պրոլետարիատի ինտերնացիոնալ շարժման վառ արտահայտություններից մեկը եղավ իմպերիալիստական պետությունների ինտերվենցիան իրագործող ֆրանսիական, անգլիական և այլ երկրների զորքերի շատ զինվորների ու նավաստիների հրաժարվելը սովետական ժողովրդի դեմ կռվելուց, նրանց անցումը սովետական իշխանության կողմը։ Բոլորի համար վառ օրինակ էր ֆրանսիական «Երրորդ ինտերնացիոնալ» խմբի անդամներ Ժաննա Լյաբուրբի, կապիտան Ժակ Սադուլի և այլ ինտերնացիոնալիստների սխրանքը, մարդկանց, որոնք առանց տատանվելու մտան սովետական երկրի պաշտպանների շարքերը։

Նշելով Անտանտի դեմ մղած վճռական հաղթանակը, Լենինը որպես կարևոր հանգամանք ընդգծում էր. «Մենք նրանից խլեցինք նրա զինվորներին։ Մենք նրա անսահման ռազմական ու տեխնիկական գերազանցությանը պատասխանեցինք այն բանով, որ այդ գերազանցությունը խլեցինք աշխատավորների համերաշխությամբ ընդդեմ իմպերիալիստական կառավարությունների»[9]։

Արտասահմանյան ինտերնացիոնալիստները, հեղափոխական լենինյանները այսօր էլ ապրում են սովետական մարդկանց երախտապարտ հիշողության մեջ։ «Սրբազան է հիշատակը քաղաքացիական պատերազմի հերոսների, բոլոր նրանց, ովքեր սովետների հանրապետությունը պաշտպանեցին իմպերիալիստական ինտերվենտներից և սպիտակգվարդիականներից։ Մեր ժողովուրդը երբեք չի մոռանա արտասահմանցի ինտերնացիոնալիստ մարտիկներին, որոնք առաջադրելով «Ձեռքերդ հեռու Սովետական Ռուսաստանից» կոչը, զենքը ձեռքներին պաշտպան կանգնեցին Հոկտեմբերի նվաճումներին»,—ասված է «Սովետական ժողովրդին» Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի դիմումում[10]։

Այսպիսով, Մեծ Հոկտեմբերից հետո ամբողջ աշխարհում ծավալվեց հեղափոխական պրոցեսի խորացում։ Հետևելով Սովետական Ռուսաստանի օրինակին, արևմուտքի պրոլետարիատը հեղափոխական գրոհի դուրս եկավ համաշխարհային կապիտալիստական սիստեմի դեմ, փորձեց իր մոտ հաստատել սոցիալիստական կարգեր, պրոլետարիատի դիկտատուրա։ Սակայն Գերմանիայում, Իտալիայում, Հունգարիայում, Բուլղարիայում, Ֆինլանդիայում, Լեհաստանում, Ավստրիայում և մյուս երկրներում բանվոր դասակարգի պայքարը անհաջողություն կրեց։ Դուրս բարձրացրեցին ռեակցիան, տեռորը, ֆաշիզմը։ Օպորտունիստների օգնությամբ բուրժուազիային հաջողվեց դուրս գալ տնտեսական ու քաղաքական սուր ճգնաժամից, 1924 թ. սկսվեց կապիտալիստական կարգերի կայունացումը։ Սակայն կապիտալիզմի այդ կայունացումը ժամանակավոր էր։ Բուրժուազիային չհաջողվեց հաղթահարել կապիտալիզմին ու իմպերիալիզմին հատուկ հակասությունները, որոնք սրվելով հանգեցրին ժամանակավոր կայունացման քայքայման, ծնեցին 1929—1933 թթ. համաշխարհային վիթխարի տնտեսական ճգնաժամը, երկրորդ համաշխարհային պատերազմը։ Բազմաթիվ հեղափոխական մարտերում ու ելույթներում մշակվեցին աշխատավորների դասակարգային պայքարի նոր կարևոր ավանդույթները, բանվոր դասակարգը ձեռք բերեց արժեքավոր քաղաքական փորձ, որը զուգակցվելով սովետական ժողովրդի, ՍՄԿԿ պատմական փորձի հետ՝ ապահովեց համաշխարհային հեղափոխական պրոցեսի հետագա խորացումը։ Հետպատերազմյան շրջանում հասունացան սոցիալիստական և ազգային-ազատագրական հեղափոխությունների հաղթանակի պայմանները, առաջացավ և ամրապնդվեց համաշխարհային սոցիալիստական լագերը։ Սոցիալական առաջընթացի գլխավոր ուժը դարձավ բանվոր դասակարգը, նրա ավանգարդ մարքս-լենինյան կոմունիստական և բանվորական կուսակցությունները այժմ գործում են աշխարհի 94 երկրներում։ Ծավալվում են մասսայական դեմոկրատական, հակաիմպերիալիստական, հակապատերազմական շարժումները, կապի-

---

9 Նույն տեղում, հ. 39, էջ 474։

10 «Սովետական Հայաստան», 14 մարտի 1987։

տալիզմի ընդհանուր ճգնաժամը խորանում է։ Մենք այժմ ապրում ենք մի աշխարհում, որը խորապես փոխվել է Հոկտեմբերյան հեղափոխության ներգործությամբ։ Մարդկության ավելի քան մեկ երրորդը թոթափել է կապիտալիստական շահագործման կապանքները։ Սոցիալիզմը գոյություն ունի, զարգանում է, ամրապնդվում որպես համաշխարհային սիստեմ։ Չկան այլևս գաղութային կայսրությունները, առաջացել են տասնյակ սուվերեն երիտասարդ պետություններ։ «Աշխարհի ներկայիս սոցիալ-քաղաքական նկարագիրը այն պատմական պրոցեսի օրինաչափ հետևանքն է, որին սկիզբ դրեց Հոկտեմբերը»,—ասված է «Սովետական ժողովրդին» ՍՄԿԿ դիմումում։ Ահա թե ինչու «Հոկտեմբերի 70-ամյակը սովետական ժողովրդի մեծ տոնն է, սոցիալիստական երկրի բոլոր ժողովուրդների, մոլորակի բոլոր առաջադեմ մարդկանց տոնը։ Դա մեր ուժերի, սոցիալիզմի նվաճումների մարտական ստուգատեսն է։ Դա միաժամանակ նաև այն բնագիծն է, որի բարձունքից պետք է իմաստավորել անցած ուղու արդյունքներն ու դասերը, աշխարհում կատարվող փոփոխությունները, սովետական հասարակության առջև ծառացող նոր խնդիրները նրա զարգացման ներկայիս չափազանց կարևոր փուլում»,—ասված է ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ[11]։

Դրան է նպատակամղված կուսակցության՝ ժողովրդի կամքն արտահայտող քաղաքական գիծը՝ Կենտկոմի ապրիլյան պլենումի, ՍՄԿԿ XXVII համագումարի, հունվարյան և հունիսյան պլենումների գիծը, որի հիմքում լենինիզմն է։ Մեծ Հոկտեմբերը այսօր շարունակվում է սովետական ժողովրդի գործերի, երկրում ծավալված վերակառուցման՝ իր էությամբ հեղափոխական, ստեղծարար աշխատանքի մեջ։

Նախապատրաստվելով Հոկտեմբերյան հեղափոխության 70-ամյակին, պատմական գիտությունը մեծ ուշադրություն է դարձնում այդ իրադարձությանը, հեղափոխական պրոցեսի տարեգրությանը, անցյալի էջերին, ռուսական պրոլետարիատի փորձի ընդհանրացմանը։ Նրա խնդիրն է բացահայտել Մեծ Հոկտեմբերի ամբողջ ճշմարտացի պատմությունը։ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկ. Մ. Ս. Գորբաչովի խոսքերով ասած «ո՛չ պատմության, ո՛չ գրականության մեջ մոռացված անուններ, սպիտակ կետեր չպետք է լինեն։ Այլապես, դա պատմություն չէ, գրականություն չէ, այլ արհեստական կոնյունկտուրային կոնստրուկցիա է»[12]։

Հոկտեմբերի իդեալները կոչում են աշխատանքի հանուն սովետական ժողովրդի բարօրության, հանուն հայրենիքի բարգավաճման, հանուն սոցիալիզմի և խաղաղության։ Կուսակցությունը հեղափոխական հաստատակամությամբ պայքարում է վերակառուցման, սոցիալիստական կարգերի դեմոկրատիզմի համակողմանի զարգացման համար, իսկ առավել դեմոկրատիա նշանակում է առավել սոցիալիզմ։

---

11 Նույն տեղում։

12 «Սովետական Հայաստան», 16 մարտի 1986։